

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար
Անցկացվող մրցույթների

Հ/ հ	Համայնքային ծառայության թափուր պաշտոնների անվանումները	Պաշտոնների անվանումների ծածկագրերը	Նշված թափուր պաշտոնների անձնագրերով սահմանված հիմնական գործառույթների նկարագրերը	Նշված թափուր պաշտոնների անձնագրերով այդ պաշտոնները զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները	Պահանջվող փաստաթղթերը
			<p>Առաջին կարգի մասնագետը՝</p> <p>1) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.</p> <p>2) հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին.</p> <p>3) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրությունների նախագծեր.</p> <p>4) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, իրականացնում է աշխատակազմի խնդիրներից բխող այլ գործառույթներ.</p> <p>5) քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան գրության նախագծեր</p> <p>Առաջին կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:</p>	<p>Առաջին կարգի մասնագետը՝</p> <p>1) ունի առնվազն միջնակարգ կրթություն</p> <p>2) ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.</p> <p>3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.</p> <p>4) ունի համակարգչով աշխատելու ունակություն.</p>	<p>Մրցույթներին մասնակցել ցանկացող՝ համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետմիասին)՝</p> <p>1) գրավոր դիմում (ձևը լրացվում է տեղում).</p> <p>2) առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի (ատեստատի կամ դիպլոմի (միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունենալու դեպքում)) և աշխատանքային գրքուկի (առկալու-թյան դեպքում) պատճենները.</p> <p>3) արական սեռի անձինք ներկայացնում են նաև</p>
1	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի	3.2-6	<p>1) լրացնում է համապատասխան փաստաթղթերը, սպասարկում է Ախուրյան բնակավայրի և համայնքի բնակիչներին, տրամադրում է համապատասխան տեղեկանքներ</p> <p>2) լրացնում է բնակավայրի տնտեսական գրքերը, իրականացնում փոփոխություններ, ժամանակին և սահմանված կարգով կատարում գրանցումներ</p> <p>3) կատարում է բնակավայրում ժամանակավոր բնակվողների</p>	<p>Ունի Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից հաստատված «Համայնքային ծառայության մասին» «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների իմացություն</p>	<p>բարձրագույն կրթություն ունենալու դեպքում)) և աշխատանքային գրքուկի (առկալու-թյան դեպքում) պատճենները.</p> <p>3) արական սեռի անձինք ներկայացնում են նաև</p>

	մասնագետ		հաշվառում		զինագրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականների պատճենները կամ համապատասխան տեղեկանք.
2	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	3.2-3	<p>1) քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկների գործունեությունը և առաջարկություն ներկայացնում դրանց աշխատանքների արդյունավետության բարձրացման վերաբերյալ,</p> <p>2) աջակցում և մեթոդական օգնություն է ցուցաբերում համայնքում նախադպրոցական տարիքի երեխաների հանգստի կազմակերպմանն ուղղված աշխատանքներին,</p> <p>3) նախադպրոցական միջոցառումների կազմակերպման համար աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում միջոցառումների ծրագրերի նախագծեր և առաջարկություններ,</p> <p>4) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ համագործակցում է համայնքի կրթական կազմակերպությունների հետ, մասնակցում այդ ոլորտներում իրականացվող համատեղ ծրագրերին և միջոցառումներին</p>	<p>ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների իմացություն:</p>	<p>4) հայտարարություններ (լրացվում են տեղում).</p> <p>5) 1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի.</p> <p>6) անձնագրի (փախստականի դեպքում՝ ՀՀ փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի) պատճենը:</p> <p>Փաստաթղթերը ներկայացնել անձամբ: Ներկայացված փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:</p>
Մրցույթներն անցկացնելու օրը, ժամը, վայրը			Փաստաթղթերի ընդունումը		Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը
Օրը՝ 2020 թվականի մարտի 25-ին, ժամը՝ 11:00-ին Վայրը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ գյուղ Ախուրյան Գյումրու խճուղի , շենք 42			Փաստաթղթերը ներկայացնելու, պաշտոնի հանձնագիրը, թեստավորման փուլի հարցաշարերը, ինչպես նաև կրթական գործունեություններ ստանալու համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան (հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան Գյումրու խճուղի, շենք 42, հեռ. 0312 70885) կամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզապետարանի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժին (հասցեն՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, 1-ին հարկ, հեռ. 0312 4-90-00*147) Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:		2020 թվականի մարտի 10-ը ներառյալ